Է. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 21 ՓԵՏՐՎԱՐ 1904 — ԹԻՒ 595

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 տլր.
Վեցամսեայ 1.50 »

— Փոխադրման տոկոսը առաջին երեսին համար 40 սանթիմ է. երեսի վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեսի ամբողջ անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

Վաղոնայի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

R. P. Kalemkarian, Mechitharistenpassage Vienna (Autriche) W. 4.

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՀԱՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ դրկել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Առտասահման համար ձեռքի
)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեռքի
)(15 ՍԱՆԹԻՄ)(

Գրութիւնք եւ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄԻ» ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷՆ

Մեր բաժանորդներուն կը յիշեցնենք, որ ներկայ փետրվար 1-ին լրացաւ «Շարժումի» բաժանորդագրական տարեշրջանը եւ կը խնդրենք անոնցմէ, որ փութացնեն բաժնեգիններու վճարումը։

ԱՄԵՐԻԿԱՅԻ մեր բաժանորդները պէտք է դրամները ուղղակի մեզ ուղարկեն։

Դիւրութեան համար անոնք կարող են Վառնայի Ազգ. պանքայէն զանձելի 15 ֆր.ի (3 տոլ.) չէքեր ուղարկել։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ բաժանորդները դիւրութեան համար կարող են ռուսական թղթադրամ դրկել ապահովագրուած նամակներու մէջ։ Ռուսական փողի հաշուով 6 ռուպլի է «Շարժումի» տարեկան բաժնեգինը։

Ստիպուած ենք նորէն կրկնել, որ «Շարժումի» բաժանորդագրութիւնը կանխիկ է եւ իր հասցէին հետ բաժնեգինն ալ չը դրկողներու դիմումները անհետեւանք կը մնան։

Քէօսթէնճէի մեր գործակալն է Պ. Դրիգոր Կարապետեան։

Այդ տեղի մեր բաժանորդներէն կը խնդրուի իրենց հաշիւը վճարել նոյն պարոնին։

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ
Ե. Հ. ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ

Ընկերներ,

Լիաջոր Կոմիտէի և կարգադիր Յանձնաժողովի անդամներից շատերի բացակայութիւնը (մէկը՝ Ռուսաստան, երկուսը՝ Կովկաս, և մէկը՝ Ամերիկա) զգալիօրէն խանգարեց «Մուրճեան» գործերի կանոնաւոր ընթացքը՝ ներկայ ամերային շրջանում։

Այդ հանգամանքը՝ տարաբաղտաբար, ազդեց և ներկայ տարւայ համագումարի հրաւիրման վրայ,—ժամանակ մնացած անդամները բաւարար թիւ չկազմելով՝ անկարող եղան ժամանակին որոշել, կարգադրել և հրաւիրել 1904 թուի կոնգրէսն, որը՝ ըստ սովորութեան՝ տեղի պիտի ունենար ապրիլի 1ին։ Մի ամսւայ ընթացքում, որ մենք ունենք մեր առաջ, անհնարին է տարածել հրաւէրները Եւրոպա, Ամերիկա և Ռուսաստան, դումարել տեղական ժողովները, պատրաստել քննելի խնդիրներ և դասախօսութիւնների ցանկը, ինչպէս և տեղեկագիրն ու գործունէութեան ծրագիրը, և այդ պատճառով ստիպուած եղանք ներկայ թուի համագումարը նշանակել սեպտեմբերի 25ին, երբ համարեա բոլոր տեղերի ուսանողները օգտւում են արձակուրդներից։ Աւելի շուտ, այն է յուլիս-օգոստոսին, անկարող ենք այդ անել, քանի որ գերմանական ընկերները այդ միջոցին ապատ չեն։

Համագումարի նախապատրաստութիւններ տեղի կունենան ժամանակին։

Ընկերներ,

Թէեւ չափազանց անախորժ է, բայց պէտք է խոստովանենք բոլորս, որ անցեալ ամերային շրջանը, ամենայարմար միջոցը պրօպագանդի և հայոց հարցին նուիրուած դասախօսութիւնների համար, անցաւ ամուլ և անպտուղ։ Ուսանողական տեղական մարմինները, որոնք անցեալ ամեռ կազմակերպեցին զանազան երկրներում մօտ տասն դասախօսութիւններ՝ նուիրած մեր դատին, այս տարի ցոյց աւեցին անըմբռնելի անկարողութիւն։ Ոչ մի մարմին նախաձեռնող չը հանդիսացաւ։ Արդեօ՞ք ուսանող երիտասարդութիւնը, որ ինքնագործունէութեան և նախաձեռնութեան օրինակներ պիտի տայ, սպասում էր որեւէ կողմից յորդոր, պահանջ, մի խթան։ «Մուրճեան» գանձարանը անցեալ տարի դրամ չը խնայեց հրապարակական դասախօսութիւնների համար, և նոյնը պատրաստ էր անել այս ամեռ եւս։ Դասախօսողներ, մեր հարցին համակրող եւրոպացիների չը լինելու, շատ կան։ Հետեւաբար, այս ամուլութիւնը հետեւանք է ոչ թէ արտաքին պարագաների... այլ միմիայն ուսանողական մարմինների անհոգ և. անտարբեր վերաբերմունքին, որ կրկնակի պախարակելի է ներկայ բոպէներին, երբ հայկական կեանքի շուրջը կատաղող ողբերգութիւնները աւելի և աւելի հրամայական են դարձնում բողոքի և պրօպագանդի գործը։

Նոյն անհոգութիւնն է նկատւում և գրական աշխատանքի կողմից։ Դեռ անցեալ տարի ընկերական հրաւէր կարդացինք հայ ուսանողութեան՝ նպատակ «Ս. Զատ. Գրադարանին» թարգմանութեամբ յեղափոխական գրքոյկների, որոնք բազմաթիւ են եւրոպական գրականութեան մէջ։ Ոչ մի արձագանք։ Մինչեւ այժմ հրատարակուած գրքոյկները բոլորն էլ այն յանձնարարութիւններն են, որ արել էր ինքը՝ Լիաջոր կոմիտէն, կամ պատրաստել Ժընէվում։ Մինչդեռ, եթէ «Մուրճեան» մօտ 400 անդամների կէսը, կէսի կէսը, տարւայ ընթացքում մի բրօշիւր թարգմաներ, բաղկացած 30.40 երեսից, ուրիշ խօսքով՝ նուիրէր մայրենի գրականութեանը օրական հինգ րոպէ, մենք կարող կը լինէինք գրքի ծարաւից պապակող հայ ժողովրդին տալ տարեկան 100 գրքոյկ, և տպագրելով իւրաքանչիւրը 2.3 հազար օրինակ, երկու տարւայ ընթացքում կը մացնէինք մեր երկիրը աւելի քան կէս միլիոն բրօշիւր, մի քանակ, որ կը հեղեղէր հայկական աշխարհը մի ծայրից միւսը...

Ինչ չենք արել ց'այժմ, անենք գէթ այժմ։

Խնդրում ենք տեղական մարմիններին՝

1. Պատրաստել եւ ուղարկել մեզ վիճակագրական տեղեկութիւններ ուսանողների թուի եւ մասնագիտութեան մասին, «Տեղեկագրի» մէջ մտցնելու համար։

2. Ուղարկել տարեկան անդամավճարները՝ մինչեւ ապրիլի վերջը։

3. Հասցնել կարգադիր Յանձնաժողովին այն բոլոր ապառիկները, որոնք մնում են ուսանողական տեղական խմբերի վրայ։

4. Ընտրել աշխատակից անդամներ եւ նորոգել հասցէները, կանոնաւոր յարաբերութիւնների համար։ «Մուրճեան» դրամական հաշիւների մասին տեղեկութիւններ ստանալ ցանկացողները պէտք է դիմեն Կարգադիր Յանձնաժողովի գանձապահին։ Իսկ հայերէն եւ օտար լեզուներով հրատարակութիւնները ստանալու համար պէտք է դիմել Լիաջոր Կոմիտէին։

ԼԻԱՋՈՐ ԿՈՄԻՏԷ
ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1903, փետրուար 25
ԺԸՆԵՎ

Հասցէ
Ուսիոն տէ զ'էքիւտիան Արմենիէն
տը լ'էօրօր. Ռիւ տը լ'Հոզլ-տը շիմի
2. Ժընեւ (Սուիս)

ՔՕՐԵԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Քաղաքականութեան մասին գուշակութիւն ընելը օդի մասին գուշակութիւն ընելու կը նմանի։ Բացարձակ ապահովութեամբ վաղուան համար չենք կրնար ըսել, որ արդեօք անձրեւ պիտի գայ թէ արեւ պիտի ծագի։ Բայց և այնպէս ընդհանուր առմամբ իրերու ընթացքին նայելով կրնանք ընել հաւանական հաշիւմը։ Քննութեան առարկայ եղող ֆակտօրները շատ անգամ լոյս կը սփռեն ապագայ պատեհականութեանց վրայ։ Ներկայ քօրեական հարցի առթիւ երեք այդպիսի անմիջական ֆակտօրներ ինկատի կուգան։ Քօրէան ինքը, Ճաբոնիան, Ռուսաստանը և ամենէն շատ Անգլիան։

Էապէս Քօրէայի դերը չեզոք է, բայց չնայելով առոր ան ունի ծանրակշիռ նշանակութիւն։ Անյիշատակ դարերէ ի վեր այս թերակղզին ասիական ցամաքի և ճաբոնական կղզիներու միացման անդամն է եղեր։ Նախնական ժամանակներու մէջ ճաբոնացիք այս թերակղզիին վրայէն են անցեր և կազմեր իրենց այսօրուան պետութիւնը և անկէ տարածեր իրենց քաղաքակրթական ազդեցութիւնը արեւելեան

եան Ասիոյ վրայ Ճաբոնիան միւս կողմէն այս երկրին վրայ նայեր է իբր ամենաերաշաւոր վայրը իր քաղաքական նպատակներուն յառաջ մղման համար։ Արդէն Քրիստոսէ յետոյ 200 թուին ներկայ Միկատոի առաջելախառն նախորդներէն մէկը արշաւանք մը ըրած է Քորէայի վրայ։ Անոր յաջորդած են ուրիշ շատ մը արշաւանքներ։ Որովհետեւ Քորէա կը կազմէ ճաբոնական շահերուն բնական շրջանակը, ճիշդ ինչպէս հին դարերու մէջ Փոքր-Ասիան Յունաստանի համար էր, Ափրիկէի գաւառը Հռոմի համար և ինչպէս այսօր Ալժերիան Ֆրանսայի համար է, Մարոքքոն Սպանիայի համար պիտի ըլլար, եթէ վերջինս իր մէջ դեռ կենսունակութիւն ունենար։ Կրկնակի նշանակութիւն ունի այս կէտը ներկայիս, երբ Ճաբոնիայի ինքնավստահութիւնը, այնքան զարմանալի արագութեամբ եւրոպական պատերազմական միջոցներու և արուեստագիտութեան իւրացումով՝ բարձրացած է։ Այս նոր ուժի գիտակցութեան մղիչ զօրութենէն առաջ եկած առաջին տարածումը զինքն ուղղեց շատ բնականաբար նորէն դիպի Քորէա։

(Շարունակելի)

ԿԱԼՈՒԱԾՆԵՐՈՒ ԳՐԱՒՈՒՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌ

(Շար. Նախորդ թիւէն եւ վերջ)

«Այսպէս Ռուսիա կը տիրէ Էջմիածնայ եւ անով Հայոց սրտին վրայ մինչեւ որ մարմիններն ալ կաշկանդելու պատեհ ժամը գայ։ Բայց թերեւս հարցնես թէ—«ինչո՞ւ համար հայն այդ լուծը չքակեր, Էջմիածին աւելի ազատ վայր մը փոխադրելով —վանդի չզգար որ վիզը լուծ ունի (Փառք Աստուծոյ այժմ զգաց դրժբախտաբար)։ Նախ անոր համար, որ Ռուսն օտար երկրի մէջ յետին ծայր ազատասէր, մինչեւ իսկ ոսմկավարական է, մինչդեռ իր ընիկ հողին վրայ առ հարկի յետին ծայր բռնասէր, երկրորդ անոր համար որ Ռուսիոյ հայն այնպէս լաւ մը կաշկանդուած է ու լեզուն բռնուած՝ որ չէ կարող իր վիճակը բացէ ի բաց յայտնել, վերջերը ցոյց տալ նոյն իսկ իր թուրքիաբնակ հայրենակցին, որ կը կարծէ թէ ինք փուչերու վրայ կը պառկի իսկ Ռուսիոյ հայը վարդերու վրայ, եւ անոր վիճակին կը տենչայ...։

«Բայց մի՛ կարծեր թէ հայը լոկ մէկ կրօնական գլուխ ունի, այլ երեք։ Կաթողիկոսական աթոռն ուրիշ տեղ փոխադրելու պէտք չունի։ Արդէն երկու հատ կան, Աղթամարայ ու Սսոյ, հալածանքի ու քաղաքական փոթորիկներու բեկորներ։ Ի՞նչ ազատ եկեղեցի, պիտի գոչես, նուիրապետական դրութիւն, կրօնի այս պատուհասը չունի, այլ պարզապէս հանրավարական հիմնարկութիւն մը՝ն է։—Համբերէ՛, քարեկամ։ Այդ միւս աթոռները «հակաթոռ կը սեպուին հայոց առջեւ, այսինքն Արարատեանին իրաւասութեան ներհակ, թէեւ անոր չափ հոգեւոր իշխանութիւն կը վարեն սահմանափակ շրջանի մը մէջ։ Ոչ այնքան քաղաքական որքան այս հովուական երրորդութիւնն պատմական նշանաւոր եւ Հայոց արդի կացութեան շատ նպաստաւոր պարագայ մըն է, որմէ կարելի է շատ մեծ օգուտներ քաղել, քանի որ կրօնը մեծ դեր կը խաղայ Արեւելքի մէջ եւ՝ եթէ երկինքն արքայութեան՝ երկրի վրայ ազատութեան դուռը կրնայ բանալ։ Բայց ի՞նչ կընեն հայք։ Աղթամար ու Սիս, որ իրենց քովն են, կը թողուն ամայի ու անպաշտպան, եւ Էջմիածինն, որ շատ հեռու է, ջերմեռանդութեամբ կը խնկարկեն, եթէ կէս մը կրօնասիրական կէս մըն ալ քաղաքական նպատակաւ։ Լաւ իմ՝ բոլորովին այս ընթացքին հակադարձն է բանաւորը։ Պէտք է տաքնալ Սսոյ հետ եւ Էջմիածնայ պաղ դէմք մը ցոյց տալ։ Այս դիրքով զգալի հարուած մը կը տրուի այն քաղաքականութեան որ Էջմիածնայ բարոյական իշխանութիւնը չնչելու կը նկրտի։

«Արդեօք չկա՞ ուրիշ ապահով միջոց մը հայոց եկեղեցին ամէն արտաքին ազդեցութիւններէ զերծ եւ անկախ պահելու։ Կա՛յ անշուշտ, բայց զան ի գործ դնելու համար կա՛մ այժ պէտք է եւ կամ տէրութեանց հաւասական պաշտպանութիւնը։ քանի որ արդարութեան եւ կրօնից ազատութեան ձայնը դեռ եւս անլսելի կը մնան...։

«Այսպէս կը դնեմ խնդիրը։ Հայերն մի քանի քաղաքական տիրապետներ ունին, բայց կամ թողիկոս մը որ իրենց հոգեւոր տէրն է։ Արդ՝ այս տէրն հասարակաց հայր է, ամէն քաղաքական նպատակի օտար, հետեւապէս եւ ոչ «մէկ» տէրութեան հպատակ այլ «այլ ամենուն» հաւասարապէս։ Թէեւ Էջմիածին Ռուսիոյ հողին վրայ, անոր գահակալն ընտրողը միայն Ռուսի հայք չեն, այլ Թուրքիոյ, Պարսկաստանի ու Հնդկաստանի հայք, այնպէս որ այս ընտրութեամբն անրեւաբարելի կը դառնայ իր անձն եւ իրաւունք ունի հովուելու իր ժողովուրդն եւ անոր կրօնական բոլոր պիտոյքը հոգալու։ Ուստի իր անձն ալ չէ կարող կապել այս կամ այն վեհապետին կամաց այլ բոլոր այն վեհապետներուն որոց իշխանութեան ներքեւ կը գտնուին հայք։ Այսպիսի եղական հանգամանօք կրօնապետ մը, եղական դիրք մը ունենալու կը պարտաւորի, այնպիսի դիրք որ ոչ մասնաւոր վեհապետ մը կախում ունենայ, այլ շեզոք մնայ ամենուն առջեւ։ «Այս բարոյական շեզոքութեան դլխաւոր մէկ պայմանն է շեզոք հող մը, ուր պէտք է նստի կաթողիկոսը, այն տէրութեանց համերաշխ հովանաւորութեան ներքեւ որոց կը հպատակին հայերը։

«Այս կարծքս, բարեկամ, թերեւս անուրջ երեւի քեզ, բայց քանի՛ քանի անուրջներ ժամանակին հետ իրականացած են, մարդկային իմացականութեան զարգացմամբն։ Աւելորդ է աւելի խօսիլ այս կէտին վրայ, որ բաւական թուղթ գրաւեց։ Այս կը տեսնեմ միայն որ հայոց Էջմիածինը լոկ պատմական հին անուն, կաթողիկոսութեան պատկառելի անիմաստութիւն պիտի մնան եթէ ժամանակիս գաղափարներով չայլափոխուին։ Եւ հայք դէթ մտաւորապէս ու բարոյապէս հաղորդակցիլ ու միանալ չպիտի կարենան, այնպէս որ ազգային յառաջադիմութեան գործը յառաջ տանին իրենց ոյժեր ամփոփելով։ եթէ ներկայ անդգայ, դանդաղ ու վտանգաւոր կիրքը պահեն։»

Մ. Մամուրեանի այս խորհուրդները թէ հրապարակի վրայ եւ թէ մասնաւոր շրջանակներու մէջ արդէն նկատի առնուած են, բայց հարկաւորը խորհուրդ տալը չէ, այլ գործնական քայլը պէտք է առնել։ Եթէ կաթողիկոսական Աթոռի վրայ այժմէն չը խորհինք եւ չը փրկենք զայն օտարի ջնջող ճիրաններէն, արդէն ինքնին զոյութիւն ունենալէ պիտի դադրի, Ռուսաստանի մէջ ոչ թէ ընդհանուր հայոց կաթողիկոսութիւն մը պիտի ունենանք, այլ շատ սահմանափակ իրաւունքներով պարզ վանահայր մը...։

Թափառիկ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՔՐՕՆԻԿ

Յունուար 7/20, 1904

Գրել էի թէ ինչպէս դեկտեմբեր 6ից սկսած, կասկածելով որ Դալիցինի պալատի տակից հայերը ական են բաց արել և կամենում են օդը ցընդեցնել, փորեցին երկարութեամբ, լայնութեամբ ամբողջ պարտէզը, դուրս տուած հողից պալատի երկրորդ յարկի լուսամուտներին հասնող բլուներ կազմեցին ... և ոչինչ չգտան, եթէ ոչ մի հոտած հինաւուրց կոյուղի։ եւ այդ առթիւ, հէնց սկզբից Դալիցինը ամբողջովին անցաւ պալատի միւս թեւը բնակելու, պարտէզի վրայ նայող մասի մէջ, իսկ պահակ զինուորներ ու կօշակներ գրեթէ չըղթայ էին կազմել շէնքի շուրջը։ Փորուածքի 13դ. օրը, ամբողջ մի թաղի տակի մառանները խուզարկելով, երբ տեսան որ ոչինչ չէ երեւում այժմ, ապագայի կաւագրութիւնների նպատակով սկսեցին չլցնել (փոսը մին) կոչուող միջոցները։ Այսուհետ, պալատի շուրջը գտնուող ազատաշէն անցքեր չենեցին, ելեքտրական գանգեր և այլ մեքենաներ դրին այնտեղ, 5-6 տեղ բեռատեսներ թողին, որ եթէ ապագայում հայերը մտածէին ական ներ փորելու ու փոյթեր անել, իմացուի և ելեքտրական գանգերը փրկեն Դալիցինին։ Այդ գործողութիւնները շարունակուում են մինչեւ այժմ, և այսօր էլ դեռ կարելի է տեսնել փորուածքները, չլցուած մուտքերն ու հողաբլուրները։ Մինչ այդ բորենին «լաւանում էր»։ Այս բառը ես գիտաւորութեամբ եմ գնում չակերտների մէջ, որովհետեւ յայտնի չէ թէ որքան լաւացել է նա։ Յայտնի է միայն այս, որ դեկտ. 30ին յայտարարուած պաշտօնական գրութեան համաձայն Դալիցինը դարձեալ իր ձեռքն է առնում երկիրը կառավարելու դեկը։ Այժմ խստութիւնները փոխանակ շարունակելու՝ յունուար 5ին բանտից արձակեցին բժիշկ Նաւասարդեանին, Սպանդարեանին, տիկ. Մարիամ Մատինեանին, Զօրեանին, եւն. եւն., որոնց բոլորին ձերբակալել էին մի ամիս առաջ և խստութեամբ պահպանում էին։ Արձակեցին նաեւ մի քանի քահանաների Շատերը այդ արձակումը բացատրում են նրանով, որ, ըստ պտտող լուրերի, Պետերբուրգից գալիս է մի յատուկ յանձնաժողով, քննելու համար վերջին դէպքերը։ Այդ յանձնաժողովը իբր թէ նշանակուած է թագաւորից, ըստ վերջին խնդրանաց վ հափտա կաթողիկոսի. յանձնաժողովը պիտի քննէ հայոց գործը ասկախ Դալիցինից և ներքին գործոց նախարարից։ Եթէ ճիշդ իսկ լինի այդ, լաւ հետեւանք անհնար է սպասել։ արդարութեան կոմիսարները Ռուսաստանի վաղուցուայ արհեստն է։ այս անգամ էլ անշուշտ տեղի պիտի ունենայ մի այդպիսի կոմեդիա, իսկ միւս կողմից ճնշումն ու անիրաւութիւնը միշտ կը մնատկանան։ Բայց ռուս-ճապօնական պատերազմը՝ այն ասելն եթէ ոչ սարսափեցնում է, գոնէ շատ զբաղեցնում է պետութիւնը։ այլ և բուն Ռուսաստանի մէջ տեղի ունեցող ներքին խռովութիւններն ու համալսարանական անկարգութիւններն այնքան մեծ ծաւալներ ստացել, որ շատ հաւանական է թէ հրատանգ է տրուած առայժմ մեղմացնել ճնշումները՝ կովկասումն էլ նոր յուզումներ չյառաջացնելու համար։

Եւ իրաւ, Ռուսաստանում 5 համալսարանների մէջ տեղի ունեցան մեծ խռովութիւններ, մի քանիսը ստիպուեցան փակել, ուսանողները մեծ թուով պատժի ենթարկուեցան։ Միւս կողմից էլ հրէական կիրքի խայտառակ դատաստանական հարցը այնպիսի բաներ մերկացրեց, որ յայտնի չէ թէ ինչպէս դիրք պիտի բռնի այսուհետեւ պետութիւնը կարենալու համար ոեւէ կերպով արդարացնել ներքին գործոց նախարարին։ Կիրքի դաւը պարզեց, որ հրէաների կոտորածը արհեստական էր և պատրաստուած։ Ֆինլանտիայում ճնշումները յառաջացնում են խուլ, բայց կտրուկ յուզումներ։ Լիբաւիրներից մի քանիսը, որոնք առաջ չանթեր էին որոտում մանր ազգերի դէմ, այժմ շնորհիւ ռուս-ճապօնական վերջին պատերազմի —սկսել էին հասերաշխութեան մասին ճառել, քաղաքացի մեղմութիւն, ներողամտութիւն։

Իսկ մայրաքաղաքի մի քանի թերթեր տպում են հիացմունքով լի գրուածքներ վեհ. Հայրապետի մասին, (օրինակ Նովոստի ռուս թերթի մէջ «Կէցցէ Հայրիկ» վերնագրով յօդուածը) հայերին պաշտպան հանդիսացող յօդուածների են տեղ տալիս, պարսաւում են գործադրուած խստութիւնները և առաջիկայ թշնամուն դիմադրելու համար մի դրօշի տակ են կոչում երկրի բոլոր ազգերին։ Այս է այժմ դրութիւնը այս բռնապետական երկրում։ Սա արտաքին է։ իսկ թէ ինչպիսի վայրենի բաներ են կատարուում ներքնապէս— անհնարագրելի է։ Բանտերը լի են, աքսոր, ծեծ, սպանութիւն բանտերի մէջ, խստութիւններ լրագրների վերաբերեալ ... անհայիւեն։ Այնպիսի օրերի ենք հասել, որ «հայութիւն», «վտանգ» բառերը գործածել լրագրութեան մէջ չէ կարելի։ որ իրաւունք չունինք ոեւէ բառ ասել մեր տխուր դրութեան մասին։ իրաւունք չկայ յորդոր կարդալ զարգացնելու գրականութիւնը, բարեւելու մամուլը՝ իրաւունք չկայ խօսիլ մայրենի լեզուի մասին։

Մինչ այդ, պետութիւնը ամէն միջոց ի գործ է դնում որ Էջմիածինը զիջի ընդունիլ գանձարանի առաջարկած գումարը միաբանութեան և ճեմարանի պէտքերի համար։ բայց վեհ. կաթողիկոսը կտրական և բացարձակ կերպով մերժում է և պիտի մերժէ այդ ողորմութիւնը, մտածելով որ հայ ազգի մայր աթոռը արնտեսական և բարոյապէս չը պիտի կախում ունենայ ոեւէ բռնապետական

իշխանութիւնից։ Տէրութիւնը ամէն միջոց ի գործ է դնում Էջմիածնին դրկելու նիւթական բոլոր աղբիւրներից։ Փոսաում գրաւում է Էջմիածնի և Նոյնիսկ վեհ. կաթողիկոսի անունով եկող օ և է գումար, արգիլել է կոնսիստորիաներին՝ այսուհետև առնել աթոռանաս պսակադրամ եւն. (որոնք ըստ օրէնքի Էջմիածնին էին դնալու) և լրտեսներով չրջապատած վանքը, ճգնում է անօթի թողնել և ստիպել նրան ընդունելու տէրութիւնից դրամ։ Անօթութեան այս պաշարման դրութիւնը սակայն չէ վհատեցնում վեհ. կաթողիկոսին և միաբաններին և չէ թուլացնում նրանց վճիռը։ Չէ՞ որ աղքը կայ և այդ ազգը այժմ մանաւանդ, ա՞ինքան ինքնաճանաչ է դարձել, որ երբեք չպիտի թողնի իր հայրապետին, Մայր-աթոռին և ճեմարանին՝ օտարի ձեռքից ընդունելու իր ապրուստը։ Եւ պետութիւնը սկսել է այժմ դիմել ուրիշ միջոցների։— փակել հեռագիտական գլխաւոր պլոցները մի պարզ, բայց լրբութեան հասնող անիրաւ պատճառով։ Իսկ երէկ հեռագիր ստացուեց, որ Շուշայ դպրոցի չէնքը անցաւ պետութեան ձեռքը։ Կը գայ անշուշտ միւս հոգեւոր դպրոցների հերթը։ Բայց հայ ազգն արդէն աչքն է առել։ որ այսօր չէ՝ վաղը պիտի փակուին բոլոր դպրանոցները և ինքն է փակելու շուտով, երբ այլևս կսպասուին նիւթական միջոցները։ Պիտի փակուին և սակայն չպիտի հանուին նրանք պետութիւնից դրամ ընդունելու օրին։ Դեկ. 22ից սինչեւ 27ը Երեւանում տեղի ունեցաւ 29 հայերի դատը, որոնք ձերբակալուած էին ցոյցերի ժամանակ։

(Վերջին պահուն)

Դեկ. 22ին Երեւանի մէջ տեսնուեցաւ 29 հայերու դատը։ Փոստաբաններ գնացել էին Մոսկուայից երկու ռուս, Թիֆլիսից մի հայ, մի վրացի և մի ռուս։ Դատարանում այդ հայերին ենթարկել օրէնքի այն յօդուածին, որով մեղադրուողները պիտի նկատուին իբրեւ ապըսպամբներ։ Սակայն դատարանը հերքում է այդպէս դատել և մեղադրուող հայերից 15ը արդարացնում է, 9ին ենթարկում 8 ամսուայ բանտարկութեան, 3ին՝ 4 ամսուայ։ Լուր ստացուեց որ թէ դատախազը և թէ դատապարտուածները դիմել են վճռաբեկ ատեանի։ Սակայն հեռագրքրութիւնը այդ դատից յետոյ կտրուած մի դէպք է կազմում։ Սկսյն յետոյ դատարանում քննւում է մի թուրքի դատը։ Թուրքը մեղադրւում է մէկի սրնտուկը կոտրելու մէջ և դատարանը նրան դատապարտում է 4 տարուայ տաժանակիր աշխատանքի։ Պատմում են։ որ երբ յանցաւորը լսում է այդ վճիռը, խօսք է խնդրում և այսպէս ասում։ «Լաչ, աղաներ, ես որ մի մարդու սնտուկը կոտրեցի, արժանի եղայ 4 տարուայ տաժանակրութեան, ի՞նչ պատժի արժանի պիտի լինին նրանք, որոնք օրը ցերեկով ջարդեցին Էջմիածնի— մի ամբողջ ազգի սնտուկները»... Եթէ ճիշդ էլ չլինի այս պատմութիւնը, բայց շատ լաւ գտնուած է։ Այս անդամ վերջացնում եմ նամակս հաղորդելով ձեզ ամէնանոր տեղեկութիւնը, այն է Օրմանեանի զարկած հեռագիրը վեհափառ կաթողիկոսին։ Ահա այդ հեռագրի բովանդակութիւնը։ «Դեկտ. 28ին, կէսօրուայ ժամը 4ից մինչեւ գիշերուայ 12ը, իմ նախագահութեամբ, մասնակցութեամբ 40 եպիսկոպոսների, վարդապետների և աշխարհական պատգամաւորների ժողով կայացաւ, և վճռուեցաւ հետեւեալը։ Եթէ ռուս կառավարութիւնը կամենայ խախտել հայ եկեղեցւոյ դարաւոր իրաւունքը ընդհանրական կաթողիկոսի ընտրութեան մէջ և կամ եթէ նա կաթողիկոսը նշանակի առանց ընդհանուր ազգի ընտրութեան, կաթողիկոսական գահը կը փոխադրի հեռաւեալ երեք տեղերից մէկը—Իւչքիլիսէ, Էմ կամ Ելիզաւետ։ Ժողովը վճռեց ինկատի առնել Սսի կաթողիկոսի մի գրութիւնը, որով նա յայտնում է լինել լեռնաւելածուն ընդհանրական կաթողիկոսի, եթէ գահը փոխադրի Սիս։ Հաղորդելով Ձերդ Սրբութեան այս բոլորը ի միխիթարութիւն և ի սփոփանս։ Մանրամասնութիւնը կը հաղորդեմ շուտով։ Օրմանեան։» Այս հեռագիրը Էջմիածին գնալուց առաջ հեռագրատնից ստացուած է Պետերբուրգ և հիւսիսային գործակալութիւնը աղաւաղած հաղորդեր էր լրագրներին։ Սակայն իրականը մնը հաղորդածն է և վեհափառը ըստացել է այժմ նրան։ Թէ այս և թէ Պետերբուրգից եկող յանձնախումբն է երեւի պատճառը, որ առժամապէս արգ. կել են բանտարկեալներին և յետաձգել աքսորելու վճռուածներին։

«Հայրենիք»

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Կրկին տպագրութեամբ Բնաչխարհիկ Բառարանի Ա. հատորի Ա. գիրքը բաղկացած 50 քառածալ թերթերէ, 40։ էջէ, զարդարուած յատուկ խընամքով տպուած բազմաթիւ պատկերներով թէեւ խոստացած էինք շարունակել Բ. հատորի տպագրութիւնը և Ա. հատորը կրկին տպագրել, յետոյ, սակայն բազմաթիւ նոր բաժանորդներու դիմումներն մեզ ստիպեցին փութացնել Ա. հատորի կրկին տպագրութիւնն։ Կը փութանք յայտնելու միայնդամայն, թէ Բ. հատորի Ա. գրքի տպագրութիւնն ես սկսած ենք շարունակել և պիտի ջանանք 4–5 ամիսէն աւարտել ու դրկել բաժանորդներու։

Տնաչուրիւն Մխիթարեան Տպարանի

Բաժանորդագրութիւնը կը շարունակուի։ Իւրաքանչիւր հատորի բաժնեգինն է 15 ֆրանկ 6 ռուպլի 3 տոլար։

Հասցէ՝ Էմբրիմիրի Աւտենիկ
Սդ. Լազար Վենիս (Իտալի)

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԱՌԹԻՒ

Այս օրերս ձեռքերնիս յայտարարութիւն ինկաւ, որուն վերնագիրն է «Ազգարար կիսաշաբաթաթերթ— Հայերէն-Ռուսաներէն —Պուքրէշ»։ Անկէ կիմանանք թէ մօտ ժամանակն Պուքրէշի մէջ վերոգրեալ անունով թերթ մը պիտի հրատարակուի։ Թէ փափաքողները իրենց բաժնեգինը տրուած հասցէն կալաց դրկեն։

Ստորագրողը՝ Էրմատեան կոչուող յոյսանի բաղդեխնդիրն է, որ Կալցի տխրահռչակ Գեւոնդ քահանայի հետ միացած հանրութեան աչքին թոզ փչել կուզեն։ Այդ մարդիկը թերթ չեն կարող հրատարակել. հետեւաբար պիտի կորսուի բաժանորդագրուողներուն ստակը։

Ուստի անկեղծօրէն կը զգուշացնենք հասարակութիւնը, մանաւանդ Ռումանահայ ազգայինները, որպէս զի չը հաւատան այդօրինակ սնամէջ յայտարարութիւններու, գիտնալով թէ Պուքրէշի մէջ, ո՛չ Էլմասեան կայ, ոչ պատրաստութիւն կայ եւ ոչ ալ ատանկներու ձեռքով թերթ հրատարակելու կարողութիւն։

Տեղեկատու

15 փետր. 1904
Պուքրէշ

Ցարգելի խմբագրութիւն, հաճեցէք հրատարակել հետեւեալ նամակը.

Ի նպաստ ընկերութեանս կարգադրուած պարահանդէսի տոմսերն վճարելու հոգն ազնուարար ու մարդասիրաբար ստանձնեցին տիրք Ա. Տամատեան, Բ. Կիւլպէնկեան, Ա. Փափազեան ու տօք. Ց. Փափազեան, որոնց անխոնջ ջանից ու ժրաջան աշխատութեան շնորհիւ սպառեցան բաւական տոմսակ որ կը կազմեն պարահանդէսի հասոյթին մեծագոյն մասը, որոյ համար ներկայիս յանուն Աղք. ընկ. կուգանք հրապարակս յայտնել ազնուաշուք Տիրաց մեր իորին շնորհակալութիւնները, նոյնը կը պարտինք Տիրք Մ. Սեդրակեանի ու Օ. Կարապետեանի որք իրենց աշխատութիւնները չը խնայեցին տոմսակ վաճառելու դործին ու հանդէսին փայլուն ելլալուն. նոյն շնորհակալութիւնները Սրբոցք Տաւուտեաններու եւ Նորիկեաններու, որք ջանք չը խնայեցին սպառելու ու արդիւնաւորելու ծաղկեփունջերը եւ քոնֆէթները։ Ինչպէս նաեւ շնորհակալութիւնս ալ Տիգրան Թիւֆէնկճեանի որ ձրիաբար Սէքտինէնիէ սրահը դըրաւ ընկերութեանս տրամադրութեան ներքեւ. նոյնպէս անկեղծ շնորհակալութիւնիս չատ մը անձերու, որոնք հանդէսին շքեղութեանը համար իրենց աջակցութիւնը չը խնայեցին։

Յարգանքով՝ Ս. Գ. Գ.

(Պատմուածքն է)

9

ԱՆՏՈՆ ՉԵԽՈՎ

Հ

ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Արցունքները կը հոսէին աչքերէն։ Մէկ ոտքի վրայ մնալով դարձաւ և սկսաւ հիւանդանոցին մէջ վեր վար երթալ։ Այժմ կայծ բռնկոնով, նեղ անդրավարտիքով ըստ վերջին նորաձեւութեան։ իր մեծ գլխով և արտայայտութեամբ կատարելապէս առլուծի մը կը նմանէր։ Բժշկի անտարբեր դէմքի վրայ յանկարծ հետաքրքրութիւն հրեցաւ։ Տեղէն վեր ելաւ և սկսաւ Ապօկինը գննել ու հարցուց.

—«Ներեցէ՛ք, սակայն հիւանդը ո՞ւր է»։

—«Հիւանդը, հիւանդը», աղաղակեց Ապօկինը խնդալով, լալով և միշտ բառնցքներով սպառնական շարժումներ ընելով։—«Անիկա հիւանդ մը չէ. «այլ անիծեալ մը, ստոր մը։ Ա՞ս այնպիսի ստորութիւն մըն է, որ «սատանան ինքը աւելի վատը չի կրնար մտածել։ Ո՛վ Աստուած, երա«նի թէ մեռած ըլլար։ Ասիկա ինձ «համար մահաբեր հարուած մըն է։ «Ո՛չ. այլևս չպիտի կրնամ ապրիլ»։

Բժիշկը ինքզինքը չակեց և սկսեց աչքերը շարժել, որոնց մէջ արցունքներ երեւացին, նեղ մօրուքը ստորին ծնօտին հետ աջ ու ձախ կը շարժուէր։

—«Ը՛հ է՛ք, խնդրեմ, ինչպէս կըլլայ», ըսաւ հետաքրքրութեամբ չուրջը նայելով «իմ գաւակն է մեռեր, կինս իր կսկիծով տանը բոլորովին մենակ է... իսկ ես հազիւ ոտքի կըրնամ կենալ, երեք գիշեր չեմ քնացեր... Ա՞ս ի՞նչ բան է, ինձ կըսափպեն թշուառ կատակերգութեան մը մէջ լրացուցիչի մը դերը խաղալու։ Ես.. ես ա՛ս չեմ հասկնար»։

Ապօկին մէկ ձեռքը բացաւ, ձգեց ճմռտուած տոմս մը յատակին և վրան կոխեց, ճիշդ որդի մը պէս, որուն մարդ ճզմել կուզէ.

—«Իսկ ես ոչինչ չեմ տեսած... ոչինչ հասկցած»— ըսաւ սեղմած ատամներով, դէմքին առաջ մէկ բրուունցքը շարժելով և դէմքի այնպիսի արտայայտութեամբ, որ կարծես թէ փապարին վրայ կոխեր էին։—«Ես ամենեւին ոչինչ չէի նկատեր, որ ան ամէն օր կուգար, նոյպէս չէի նկատեր, որ այսօր կառքով էր եկեր։ Ինչո՞ւ կառքով Եւ ես այս չտեսայ, ես յիմարս»։

—«Ոչինչ... ոչինչ չեմ հասկնար», կը մրմռար բժիշկը։—» Ի՞նչ է սա։ Ի՞նչ կը նշանակէ մէկու մը խենթի տեղ դնել. սա մարդկային վշտի ծաղր մըն է։ Ասիկա անկարելի բան մըն է.. կեանքիս մէջ առաջին անգամն է, որ կը տեսնեմ»։

Նոր ըմբռնել սկսող մարդու մը թմրած և զարմացած արտայայտութեամբ, որուն երդումով բան մը հաստատել տալ կուզեն, բժիշկը ուսերը շարժեց, ձեռքի շարժումներ ըրաւ, որոնք իր զարմացքը կարտայայտէին, և բան մը ըսելու կամ ընելու անկարող, ծայրահեղ յոգնած թիկնաթոռին մէջ խրուեցաւ։

(Շարունակելի)

նայեցին։ Վերջապէս խորին շնորհակալութիւն այն ամէն անձերու, որոնք նուէրներով ու համակրութեամբ աշակցեցան ընկ. Գործ. Ժողովոյ աշխատութեան։

Պարահանդէսի հասոյթի ու ծախքերու մասին յառաջիկային պիտի հրատարակենք մասնաւոր հաշուեցուցակով։

Ի դիմաց Ազգ. Ընկ. Գործադիր Ժողովոյ (ԿՆԻՖ)

Վառնա 20 փետ 1904

Վէնէտիկի Մխիթարեան տպարանէն ստացանք.

Ա. Հ. Ս. Էփրիկեան պատկերազարդ ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ հատոր առաջին երկրորդ տպագրութիւն։

Բ. ՏԱԳՆԱՊԸ Ազգավէպ Հ. Ս. Եփրեմեան։

Գ. ՃԻՈՎՈՆՏԱ Մելոտրամ 4 արարուածով թարգմ. Հ. Ա. Ղազիկեան։

Դ. Բազմավէպ, մարտ, թիւ 3

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Միխայիլովսի, Մակեդոնական կեդր. կոմիտէի նախկին նախագահը, լուսաւորութեան նախարարին կողմէ արձակուած է իր բրոֆէսորի պաշտօնէն և կառավարութեան կողմէ դատի ենթարկուած։ Գաւառներու մէջ այս դէպքը տուած է բողոքի և միթինկներու առիթ, բայց կառավարութիւնը ատոնք ալ շուտով պիտի լռեցնէ ի հարկէ։

— «Ինֆորմացիոն»ի Սոֆիայի թղթակիցը քաղաքական հորիզոնը շատ ամպոտ կը նկարագրէ։ Զնայելով եղած համաձայնութեան Պուլկարիա և Թուրքիա կասկածով կը վերաբերին իրարու հանդէպ և զինուորական պատրաստութիւններ կը տեսնեն։ Պալքանի մէջ պատահելիք դէպքերուն համար Ռուսիա ևս կը տեսնէ պատրաստութիւններ։

— Նաչովիչի ջանքերով Թիւրքիոյ և Պուլկարիոյ մէջ յառաջ եկած մերձեցումն է։ Թիւրքիա յանձն կառնէ բանտարկեալներուն և փախստականներուն ընդհանուր ներում շնորհել, գաղթականներու վերադարձը ազատ հռչակել, վերցնել էքզարքի իրաւանց սահմանափակումը դպրոցական և եկեղեցական հարցերու մէջ, վերցնել պուլկարական ապրանքներու փոխադրութեան համար մինչեւ հիմա եղած դժուարութիւնները։ Պուլկարիա իր կողմէն կը պարտաւորուի մակեդոնական շարժումը ճնշել և չէթաներու կազմուիլը խիստ միջոցներով արգիլել։

Բայց նայինք այս բոլորը հաճելի՞ է նաեւ յեղափոխականներուն, որոնց ոյժէն և ընթացքէն կախուած է իրերու վերջնական դրութիւնը։

— Սոֆիայի ռուսական ներկայացուցիչ Լերմէնտով շրջաբերական մը հանած է, որու մէջ Ցարի կողմէն կամաւոր զրուիլ ուզող պուլկարներուն շնորհակալութիւն կը յայտնէ և կը յայտարարէ, որ ճամբու հեռաւորութեան և դժուարութեան պատճառով կամաւորներ չեն ընդունուիր։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Լօնտօնի «Թայմզ» թերթը վարձած է անձնական նաւ մը և իր աշխատակիցներէն կարողագոյնին մէկը անոր մէջ դնելով ղրկած է կռուի վայրը պատերազմին վրայ թերթին ստոյգ տեղեկութիւններ հաղորդելու համար։ Նաւին համար ամսական 100,000 ֆր. ծախք կըլլայ։ Աշխատակիցը հեռագիր մը քաշած է, որը արժած է 10,000 ֆր.

—Ցամաքի վրայ պատերազմը սկսուած կարելի է համարել։ Արդէն տեղի ունեցած են փոքրիկ բաղխումներ. ծովուն վրայ ճապոնցիները տէր են, անոնք Վլատիվոստոքի մէջ արգիլած և անշարժութեան դատապարտած են ռուսական տորմիղը։

—Քորէայի մէջ Բիոէկեանկի մօտ ռուս հեծեալներու և ճապոնական յառաջապահներու միջեւ տեղի ունեցած է կռիւ մը. ռուսերը ետ են քաշուած։

—Զինաստան փոխանակ 3000ի 30,000 զօրք կեդրոնացուցած է հիւս. սահմանին վրայ։ Ռուսերը կասկածանքով կը նային Զինաստանի այս քայլին վրայ։ Արձակուած են Պայքալի երկաթուղիի գծին վրայ աշխատող չինացի և ճապոնացի բանուորները։

—Զինացիները տեղ տեղ կը դժուարին ռուս զօրքին համար պաշար ծախել։

—Պայքալ լճի վրայէն ռուսերը սկսած են իրենց փոխադրութիւնը, բայց առաջին անգամին իսկ ունեցած են մեծ կորուստներ։ Լճին վրայ կտիրէ 40 աստիճան ցուրտ, զինուորները կը սառին։ Արդէն խօսք կայ, թէ 1000 հոգի հասած են ծանր վիճակի և սառոյցը կոտրելով ջուրին մէջ թաղուած է մեծաքանակ պաշար։ Այս բոլորը Ռուսիոյ մէջ կը պատճառէ մեծ մտատանջութիւն. միւս կողմէ ճապոնցիները դիւրին և առանց կորստի կը շարունակեն զօրաց և պաշարի փոխադրութիւնը։ Բեոէկեանկի շրջակայքը գրաւուած է ճապոնական զօրաց բազմութեամբ։ Ռուսերը կամաց կամաց կը յառաջանան. Ռուս յառաջապահներու և ճապոնական հեծեալներու միջեւ տեղի ունեցած է պզտիկ բաղխում մը։ Ճապոնացիք ետ են քաշուած։ Այդ դեռ նշանակութիւն չունի։ Ճապոնական հեծելազօրքը չէ որ վճռողական դեր պիտի խաղայ, այլ հետեւակներու բանակը, որ նոյնքան ուժեղ է, որքան ռուսականը և թնդանօթաձիգները, որոնք ռուսականէն շատ աւելի ուժեղ են։

Այս բոլորէն զատ Զինաստանն ալ կը տեսնէ պատերազմի պատրաստութիւններ ու դէպի հիւսիս կը ղրկէ զօրք ու ստակ։ Զինական զինարանները և վառօդի գործարանները տենդոտ գործունէութեան մէջ են։

— Ճապոնիա Զինաստանէն գընած է 3 մարտանաւեր, որով ճապոնիա կունենայ այժմ 35 մարտանաւեր։ Ռուսիա ունի 21 մարտանաւեր, որոնցմէ շատերը դեռ կռուի վայրը չեն հասած և որոնց մէացումը միւս նաւերուն հետ շատ կասկածելի է։

Ռուսիա ունի 2 թօրբէտոնաւեր ժամուան մը մէջ 30 մղոն արագութեամբ, 27 թօրբէտոնաւեր 25-27 մղոն արագութեամբ, մինչդեռ Ճապոնիա ունի 9 թօրբէտոնաւեր 31 մղոն արագութեամբ, 7 հատ 30 մղոն և 10 հատ 29 մղոն արագութեամբ։

— Վիէննայի մէջ յանձնաժողով մը կազմուած է պատերազմի վիրաւորեալներուն օգնելու համար։

— Հակառակ մինչեւ հիմա տիրած սովորութեան այս անգամ ռուսական մեծ-իշխաններուն թոյլ չի տրուիր պատերազմին մասնակցել, վիրաւորելով անոնց փառասիրութիւնը։ Երեւի Քուրաբօթքինի ազդեցութեան արդիւնքն է այս, որը կատէ Սալոնի հերոսները։ Խօսք կայ, որ ցարը հետեւելով իր նախորդներուն օրինակին պիտի երթայ կռուի վայրը։ Ինչպէս յայտնի է ռուս-թիւրքական պատերազմին անձամբ մասնակցած է Սլէքսանտր Բ.

— Ծովակալ Թոկօ միտքը դրած է Բորթ-Արթուրը գրաւել։

Փետր. 29ին (Ն. Տ.) ճապոնական 15 մարտանաւեր յարձակում գործած են Բորթ-Արթուրի վրայ։

Ռուսերու կողմէ Ասկոլտ, Պայան, Նովիք մարտանաւերը 4 թօրբէտոներով ուղած են յառաջանալ և ճապոնական նաւերու վրայ յարձակում գործել, բայց ստիպուած են ետ քաշուիլ։ Ասկոլտ, Նովիք և Ռէտվիզան զատուած են ծանր կերպով, թօրբէտոնաւ մը ընկզմած է։ Երկու ժամ կրակ թափելէ ետք ճապոնական տորմիղը անվնաս ետ քաշուած է։

—Անգլիոյ և ամերիկայի դեսպանները Ճապոնիոյ և Քորէայի միջեւ կնքուած նիզակակցութեան կը նային հաշտ աչքով։

ԹՈՒՐՔԻԱ

Թրքական ծառայութեան մէջ գտնուող Ֆրանսացի մը՝ Թուսթէն բաշա մեռած է։

— Օտար սպաները դեռ Մակեդոնիա չեն մեկնած։ Թիւրքիա կը պահանջէ անոնցմէն թրքական համազգեստ կրել։ Օտարները կը մերժեն և ինդիրը ըստ թրքական հինաւուրց սովորութեան կը ձգձգուի։

— Պարաֆով ժուրնալիստի մը հետ տեսակցութեան մէջ միտք յայտնած է, որ թիւրք-պուլկարական պատերազմը տեղի չպիտի ունենայ, որովհետեւ երկու կողմէն ալ խաղաղութիւնը պահպանել կուզեն։

— Զնայելով Նաչովիչի ջանքերով յառաջ եկած համաձայնութեան թիւրքերը անորոշութեան մէջ կը մտատանջուին և անդադար պատրաստութիւններ կը տեսնեն։ Անոնք կը կարծեն, որ Նաչովիչի ըրածը դիւանագիտական խաղ մըն է ժամանակ շահելու և պատերազմի պատրաստութիւն տեսնելու համար։

Բէֆորմներու խնդիրը կը կաղայ և քայլ մը առաջ չերթար երկու պետութեանց դեսպանները գործի ընթացքէն շատ դժոհ են։

— «Թան» կը հաղորդէ, որ Հայաստանի մէջ տեղի ունեցած են խռովութիւններ։

ՌՈՒՍԻԱ

«Ինֆորմացիոն» կիմանայ, որ Պաքուի հայոց եկեղեցիին մէջ ռումբ նետողը ռուս մը եղած է։

— Երեւի ռուս անիշխանական մը։ Բազմութեան մէջէն ձերբակալուած են երկու ուրիշ ռուս բանուորներ, որոնք նոյնպէս զինուած են եղեր ռումբերով։ Կը կարծուի, որ ատոնք կը պատկանին ռուս սոցիալիստ-յեղափոխական կազմակերպութեան, որը տեռորիստական միջոցներով կը ջանայ խանգարել ամէն ինչ, որ ցարիզմի համար կրլլայ։

Նոյն թերթը կը գրէ նաեւ, թէ ժողովուրդը բնաւ չի ոգեւորուիր պատերազմով և եղած ցոյցերը բռնի են, ոստիկանութեան կողմէ սարքուած։

ԱՆԳԼԻԱ

Անգլիոյ և Ապանիոյ միջեւ կնքուած են հաշտարար ատեանի մը համար պայմաններ։

ԻՏԱԼԻԱ

Երեսփոխանական ժողովը կանանց իրաւունք տուած է իրաւագիտական տիպլոմը ստանալէն ետքը փաստաբանութեամբ պարապիլ։

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна